

Ֆերմե՞ր, թե՞ «ջուր կրող» կանանց խնդիրները գյուղում

«Ինձ մի սիրիր ծաղկի նման,

կուզեմ ապրել ես արժանի . . .»

Այս խոսքերը պատկանում են հայ բանաստեղծուհի Շուշանիկ Կուրդինյանին:

Երկար ժամանակ է, ինչ դիտարկում եմ Ջավախեթիում բնակվող կանանց խնդիրները: Միշտ ցանկացել եմ գրել գյուղում ապրող կանանց ծանր աշխատանքի մասին: Ես կսկսեմ գրել՝ կիսվելով այն ամենով, ինչ տեսել եմ Ախալքալաքի գյուղերից մեկում ...

Ջրի պակասը և առաջնահերթությունները...

Գյուղի կանանց առօրյա հոգսերը հետևյալն են. առավոտյան անասունների կերակրում-խնամք (ձմռանը հիմնականում տղամարդիկ են անում), տան ջեռուցման համար վառելափայտի կամ աթարի մատակարարում, տան մաքրություն, խոհարարություն, երեխաների խնամք և այլն: Գյուղը, որտեղ ես էի այցելել, խմելու ջուր չկար: Բնակչությունը՝ հիմնականում երեխաներ և կանայք, խմելու ջուր են «կրում» վերցնում աղբյուրից: Նրանց հիմնական խնդրանքը ջրի խնդիրը լուծելն էր:

Միննույն ժամանակ երբ, որ մեր մունիցիպալիտետը հարուստ է գետերի, լճերի և առհասարակ ջրային պաշարներով:

Վրաստանի անկախացումից 30 տարի անց էլ խմելու ջրի ենթակառուցվածքի խնդիրների մասին խոսելն ակնհայտորեն արտահայտում է տեղի պաշտոնյաների անտարբերությունը և ցույց է տալիս, որ առաջնահերթությունները սխալ են անվանակարգվել:

Ծանր, չզնահատված ընտանեկան աշխատանքն ու հիվանդությունները...

Մանկապարտեզների անհասանելիության խնդիրն ազդում է գյուղական բնակավայրերում ապրող ընտանիքների մեծ մասին: Երեխաների ամենօրյա խնամքի անհրաժեշտությունը կանանց ժամանակ չի թողնում ներգրավելու հասարակական կյանքին:

Կանանց աշխատանքը դրանով չի ավարտվում: Շատ դեպքերում վերը նշվածներին գումարվում են աղբահանությունը, կովի կաթ կթելու, պանրագործությունը, այգու խնամքը և այլ մանր գործեր: Ծանր աշխատանքը ու անբարենպաստ պայմանները քայքայում են մարդու առողջությունը: Որքան ցածր է եկամուտը և որքան վատ է ընտանիքի կենսապայմանները, այնքան տատանողական է մարդու առողջական վիճակը: Վահանաձև գեղձի հիվանդությունները մեզ մոտ բավականին տարածված են: Տեղացիները դա բացատրում են խմելու ջրի մեջ յոդի պակասով:

Ֆորմալ քաղաքական ակտիվություն

Գյուղի աջակցության պետական ծրագրում կանանց ներգրավվածության մակարդակը նվազագույն է: Ծրագիրը վերանայելիս ակտիվ կանանց չեք տեսնի: Հաճախ դպրոցի

ուսուցիչները ֆորմալ ներգրավված են այս գործընթացում: Նրանցից շատերը ուղղակիորեն տեղեկություններ չունեն, թե ինչ է նշանակում գյուղի աջակցության ծրագիր:

Երիտասարդների հետ խոսելիս պարզ է դառնում, որ նրանք դրական են վերաբերվում կանանց ներգրավածությանը:

Գյուղացիներից մեկի խոսքով՝ գյուղում շատ խնդիրներ կարելի է հեշտությամբ լուծել կանանց պատշաճ ներգրավությամբ: Կանանց մասնակցության ժամանակ խնդիրները քննարկվում են ավելի մանրամասն: Տղամարդիկ հաճախ չեն խոսում խնդրահարույց հարցերի մասին, որպեսզի խուսափեն հակամարտություններից եւ դրանով վնասում են գործին:

Համոզված եմ, որ կանայք կարող են ավելին անել գյուղի զարգացման համար: Նրանց ակտիվ գործունեությունը զգալի շահեկան փոփոխություններ կբերի քաղաքացիական ակտիվիզմի ոլորտում և ոչ միայն:

Կանայք և գյուղատնտեսությունը

Անգնահատված ու անգնահատելի է կանանց ներդրումը գյուղատնտեսության մեջ: Նրանք կարևոր աշխատանք են կատարում, թեև նրանց տքնաջան աշխատանքը չի գնահատվում: Նման գործունեությամբ զբաղվող կանայք համարվում են ինքնազբաղված կամ ոչ ակտիվ: Գյուղի կանանց աշխատանքային ռեսուրսները ծախսվում են բազմաթիվ դժվարությունների դեմ: Աշխատանքի պտուղներն այնքան անեկամտաբեր են, որ աշխատողներին թողնում են հիասթափված, իսկ առողջությունը՝ խախտված: Նրանք կատարում են այդ ծանր աշխատանքը՝ ծանր պայմաներում:

Կինը և ավանդույթը

Հաճախ կանանց պասիվության պատճառ նշվում է ավանդական մշակույթը: Թե ինչ է նշանակում ավանդական մշակույթ, ինձ համար անհասկանալի է:

Այստեղ մենք գործ ունենք ոչ թե ավանդական մշակույթի, այլ մեկ այլ խնդրի հետ: Դա պահպանողական մտածելակերպն է: Ըստ պահպանողական դիրքորոշման՝ կանայք ներգրավված չեն հասարակական կյանքում, որոշումները կայացնում են տղամարդիկ համայնքում և ընտանիքում: Մյուս կողմից, խնդիրը մշակույթի ու ավանդույթների կարևորությունն անտեսելու և չուսուցման մեջ է: Ուսուցման պակասը օգնում է համայնքում մշակույթի, ավանդույթների և գենդերի մասին գոյություն չունեցող տերմինների և կարծիքների ձևավորմանը: Նման համատեքստը համայնքի ներսում ձևավորում է տարբեր անհատների ինքնաընկալումը, որը հեռու է իրականությունից և հիմնված է սուբյեկտիվ կարծիքի վրա:

Հաճախ կանանց հետ զրուցելիս նրանք համայնքի համար միայն ընդհանուր խնդիրներ են նշում և կոնկրետ հարցեր չեն նշում իրենց վերաբերող հատուկ խնդիրների մասին: Այդ խնդիրներն են՝ եկամուտների բացակայությունը, ենթակառուցվածքների բացակայությունը և այլն:

Աննպատակ նախագծեր

Նման իրականության մեջ տեղում կանանց հիմնախնդիրներով աշխատող կազմակերպությունները կամ նախաձեռնող խմբերը հաճախ խեղաթյուրում են խնդիրները: Ավելի հաճախ նախագծերը կենտրոնանում են կանանց առաջնորդության և տնտեսական հզորացման վրա:

Երբ խոսում ենք կանանց առաջնորդության մասին, ես հիշեում եմ Նինոմիհայի օրինակը: Նինոմիհայում հինգ տարի է քաղաքապետը կին է: Վերջին ՏԻՄ ընտրությունների արդյունքում ավագանիում քվտավորման մեխանիզմի ներդրմամբ ավելացել է կանանց թիվը: Մինչ օրս ոչ մի կին քաղաքական գործիչ հանդես չի եկել կոնկրետ նախաձեռնությամբ կանանց խնդիրներ լուծելու համար: Օրինակ՝ ինքնագրադված կանանց մոտիվացնելու հզորացնելու համար դրամաշնորհային մրցույթներ հայտարարելը, բժշկական ապահովագրության առաջարկում, գյուղերում վաճառքի/ռեալիզացման շուկաների ստեղծում, գրադարանների ստեղծում և այլն: Այս կերպ խթանել կանաց ներգրավագության և զարգացնել մասնակցությունը:

Տարբեր կազմակերպություններ, խնդիրը լավ ուսումնասիրելու և լուծման նախաձեռնություններով հանդես գալու փոխարեն, հաճախ նույն ծրագրի շրջանակներում սովորեցնում են բանկային հարաբերություններ և փոխառությունների ընթացակարգեր, ինչն էլ ավելի է բարդացնում ինքնագրադված կանանց տնտեսական վիճակը: Կանանց անհաջողությունների օրինակները ամրապնդում են տարածված մոտեցումները տարածաշրջանում: Տարբեր դրամաշնորհառու կազմակերպություններից առաջատար կանայք գալիս են այստեղ և առաջարկում կանանց նախագծեր և նախաձեռնություններ, որոնք լիովին չեն ուսումնասիրել տեղի իրականությունը: Աննպատակահին ծրագրերով աշխատելը միայն բարդացնում է իրավիճակը:

Լուծման ուղիներ՝ Կրթություն և միայն կրթություն:

Այս խնդիրները և պահպանողական մոտեցումը փոխելու ամենաարդյունավետ միջոցը կրթական գործունեությունն է: Այդ թվում՝ տեղական մակարդակով արհեստագործական ուսումնարանների բացում, որտեղ հնարավոր կլինի պատրաստել կոնկրետ մասնագետներ: Երիտասարդները հաճախ չեն կարողանում կրթություն ստանալ ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով: Ուստի, կարծում եմ, արհեստագործական ուսումնարանների հզորացումը նրանց համար նաև ինքնուրույն եկամուտ ստանալու հնարավորություն կստեղծի:

Երկրորդ - Ախալքալաքում Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի մասնաճյուղի հզորացում՝ իրավասու անձնակազմի և ենթակառուցվածքների բարելավման միջոցով: Ինչը կավելացնի հաստատության ուսանողների թիվը: Որակյալ կրթությունն ազդում է պահպանողական մոտեցումների և մտածելակերպի փոփոխության վրա: Այս ուղղությամբ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Ջավախքում առկա մարտահրավերները, ինչպիսիք են կանանց համայնքյին ներգրավվածության պասիվությունը, քրտնաջան աշխատանքը և պահպանողական

մտածողությունը, կավելացնեմ ևս մեկ կարևոր խնդիր: Իմ դիտարկումներից ելնելով ենթադրում եմ, որ տարածաշրջանում տղամարդկանց ակտիվ աշխատանքային միգրացիայի պայմաններում ընտանիքներում առկա է դերերի խաղտում: Ջավախքում կանայք 7-8 ամիս մենակ են մնում ծանր աշխատանքի ու դժվարին պայմանների առջև: Տղամարդիկ, ովքեր հիմնականում միգրացիայի ժամանակ աշխատում են որպես բանվոր, իսկ կանայք, ովքեր տեղում կովում են վերը նշված իրականության հետ, ժամանակի սղության պատճառով հրաժարվում են որևէ նորությունից: Սրանով ուզում եմ ասել, որ ժամանակի սղության պատճառով թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ հնարավորություն չունեն զարգանալու, նույնիսկ գիրք կարդալու:

Այսպես թե այնպես, ոչ ոք չի կարող ազատվել աշխատանքից: Արժանապատիվ կյանք հնարավոր է կրթության հասանելիության և հավասարակշռված աշխատանքային օրվա դեպքում:

Հիմա կինն ընտանիքում ունի իր դերը երեխայի դաստիարակության և ընտանիքի մաքրության պահպանման գործում: Կնոջ կարիերան սկսվում է ամուսնությամբ և ավարտվում թոռների մեծացմամբ:

Վերջաբանի համար

Բլոգը նորից կավարտեմ Կուրդիստանի գրած բանաստեղծության մի հատվածով

Եվ քո կյանքի միակ պայման՝

Ուտել, քնել ու ծնել՝

Որպես կնիք ստրկության,

Այն, որ աղջիկ ես ծնվել:

Ամեն տարի տասնյակ սեմինարներ են անցկացվում կանանց իրավունքների և գենդերային հավասարության վերաբերյալ: Բանախոսները ներկայացնում են կանանց շարժումների միջազգային փորձը: Որտեղ է մեր փորձը: Ինչպես երևում է չենք էլ ունեցել: Հույսովեմ, որ իմ համայնքի կանայք գոնե մի օր կփոխեն այս իրականությունը: